

ՏԵՂԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ



*Այս հետազոտությունը ստեղծվել է
Ամերիկայի ժողովրդի
աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային
գարգացման գործակալության
/ԱՄՆ ՄԶԳ/ միջոցով:
Հետազոտության
բովանդակությունը միմիային
հեղինակներին է և պարտադիր չէ,
որ արտահայտի ԱՄՆ ՄԶԳ կամ
ԱՄՆ կառավարության
տեսակետները:*

**ՄՐՑԱԿՑԱՅԻՆ
ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ (PACA)
ԶՈՐԱԿԱՆ ԵՎ ՀԱՂԹԱՆԱԿ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ**

Բովանդակություն

Վերլուծություն իրականացնող կառույց	3
Համայնքներ.....	4
Համայնքների վերաբերյալ տեղեկություններ	4
Համայնքների մրցակցային առավելությունները	5
Տնտեսության ճյուղերի վերլուծություն	6
Այգեգործություն	7
Այգեգործության հիմնական ցուցանիշները և եկամտաբերության հաշվարկ	7
Այգեգործության համեմատական առավելությունները.....	10
Մրգերի վերամշակում.....	10
«Այգեգործություն – պտղի շարունակական վերամշակում» արժեզրթան համայնքներում	11
Այգեգործության արժեզրթայի առանձին փուլերի նկարագիր և միջամտություններ.....	12
Դաշտավարություն.....	14
Հողագործության մեջ հնարավոր միջամտություններ.....	16
Անասնապահություն	17
Կանանց ներգրավվածությունը արժեզրթաներում	18
Նախաձեռնությունների ամփոփ նկարագիր	19

Վերլուծություն իրականացնող կառույց

Գեղարքունիքի մարզի առևտրաարդյունաբերական պալատ



ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԱՌԵՎՏՐԱՊՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՊԱԼԱՏ
GEGHARKUNIK CHAMBER OF COMMERCE AND INDUSTRY

Զորական և Հաղթանակ համայնքներում տեղական տնտեսական զարգացման գործընթացն սկսվեց 2014 թ-ի փետրվար ամսին ԱՄՆ ՄԶԳ-ի ֆինանսավորմամբ համատեղ իրականացվող «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» (PRP) ծրագրի շրջանակում: Բացահայտվեցին համայնքների հիմնական մրցակցային առավելությունները և ախտորոշվեցին տնտեսության առաջատար ճյուղերը, որոնց հիման վրա առաջարկվեցին տնտեսության զարգացման համար արմատական նշանակություն ունեցող նախաձեռնություններ:

Գործընթացն իր մեջ ներառեց հետևյալ փուլերը.

- ⇒ գործընթացի ընդհանուր ներկայացում, ծանոթություն, տեղական թիմի ձևավորում,
- ⇒ համայնքների տնտեսական քարտեզագրում- առաջատար ճյուղերի առանձնացում, ճյուղերում առաջատար դերակատարների բացահայտում,
- ⇒ առկա արժեշտիքների վերլուծություն, բարեփոխման նախաձեռնությունների բացահայտում,
- ⇒ աշխատանքային հանդիպումներ՝ առաջատար ճյուղերի վերլուծության համար,
- ⇒ արդյունքների ամփոփում, նախաձեռնությունների ստացում,
- ⇒ նախաձեռնությունների վերջնականացում, գրքույկի մշակում,
- ⇒ համայնքների ակտիվ դերակատարներին ստացված արդյունքների, նախաձեռնությունների ներկայացում:

Համայնքներ

Հայաստանի հյուսիս-արևելյան սահմանին՝ Վրաստանի սահմանից մոտ 4 կմ հեռավորության վրա, իրար հարևանությամբ են տեղակայված Զորական և Հաղթանակ համայնքները:

Լինելով առանձին համայնքներ՝ միևնույն ժամանակ այս երկու համայնքներն ունեն տնտեսության սերտաճած ճյուղեր, ամուր կապեր և զարգացած համագործակցություն:

Երկու համայնքներում էլ բնակչության հիմնական զբաղմունքը այգեգործությունն ու դաշտավարությունն է, մասամբ՝ անասնապահությունը:

Համայնքները գտնվում են ծովի մակերևույթից 600 մ բարձրության վրա: Ամռանը միջին ջերմաստիճանը + 24C է, ձմռանը՝ 0C.

Համայնքների վերաբերյալ տեղեկություններ

	Զորական	Հաղթանակ
Բնակչություն	1050	1322
Տնային տնտեսություններ	324	388
Վարելահող	630	650
որից՝ ջրովի	74	330
Ցանվող կուլտուրաներ (հա)	552	175
Այգիներ	83.5	236
Խոշոր եղջերավոր անասուններ	399	367
որից՝ կով	213	208
Մանր եղջերավորներ	186	286
Թռչուններ	3611	4035
Կոմբայններ	1	1
Տրակտորներ	13	10
Բեռնատարներ	4	6

Համայնքների մրցակցային առավելությունները

Ստորև ներկայացված են համայնքների տնտեսությունների մրցակցային առավելությունները, որոնց հիմքում է ընկած համայնքների տնտեսության ուժը՝ համեմատած ինչպես հարևան, այնպես էլ ՀՀ այլ մարզերի համայնքների հետ:

Բարենպաստ և մերձարևադարձային կլիմա, մեղմ ձմեռ	Գտնվելով ծովի մակերևույթից ընդամենը 600 մետր բարձրության վրա՝ համայնքները ունեն մերձարևադարձային կլիմա, որն ապահովում է այգեգործության զարգացման համար բարենպաստ պայմաններ:
Բերքի հասունացման ամենակարճ ժամանակահատված	Բերքը հասունանում է 10 - 30 օր շուտ՝ ՀՀ այլ շրջանների հետ համեմատած, ինչը թույլ է տալիս առաջինը մտնել շուկա և համեմատաբար թանկ վաճառել բերքը:
Երևան – Թբիլիսի մայրուղու հարևանություն	Մայրուղու հարևանությունը թույլ է տալիս բերքի մի մասը վաճառել ճանապարհին մոտ՝ համեմատաբար բարձր գնով:
Հաջողված փորձի արագ կրկնօրինակման հակվածություն	Մարդիկ բաց են նորարարության և հաջողված փորձի կրկնօրինակման առումով, ինչը թույլ է տալիս առավել արդյունավետ գործողություններն արագորեն տարածելու:

Տնտեսության ճյուղերի վերլուծություն

Համայնքների տնտեսության հիմնական ճյուղերը վերլուծելիս հաշվի է առնվել, թե որտեղ է կենտրոնացած համայնքի աշխատող բնակչության մեծ մասը և որտեղ է ստեղծվում ամենամեծ եկամուտը: Գնահատվել են այս ճյուղերի զարգացման վրա ազդեցություն ունեցող գործոնները, արժեքային շղթաները, օժանդակող ճյուղերի հասանելիությունը, անհրաժեշտ ենթակառուցվածքների հասանելիությունն ու ճյուղում առկա պահանջարկի որակը: Ուշադրություն է դարձվել ճյուղերի շահութաբերության վրա՝ համեմատած այլ ճյուղերի և համայնքների (որոշ դեպքերում՝ տարածաշրջանների և հանրապետության միջին) ցուցանիշների հետ:

Փորձագետները և տեղական թիմը համատեղ առանձնացրել են համայնքների տնտեսական զարգացման գերակա ճյուղերը, որոնք հիմնված են տեղական մրցակցային առավելությունների վրա.

Ռազմավարական ճյուղեր

⇒ Այգեգործություն և հետագա վերամշակում

Մերձարևադարձային կլիման, բերքի հասունացման կարճ ժամանակահատվածը և մեղմ ձմեռը նպաստավոր պայմաններ են ստեղծում այգեգործության զարգացման համար: Այստեղ աճեցնում են ինչպես այս ենթաշրջանում ավանդապես մշակվող մրգեր, այնպես էլ մրգերի նոր տեսակներ՝ արքայանարինջ, արևադարձային մրգեր, որոնք հնարավոր չէ աճեցնել ՀՀ այլ շրջաններում:

⇒ Արևածաղկի արտադրություն

Շնորհիվ մշակման պարզության և բարձր եկամտաբերության՝ համեմատած հացահատիկի հետ, արևածաղկի մշակումը դարձել է համայնքների բնակչության զգալի մասի եկամտի աղբյուրը:

Արևածաղկի մշակման ոլորտի զարգացմանն է նպաստել նաև Բագրատաշեն համայնքում արևածաղկի բովարանների առկայությունը, որոնք գնում են ամբողջ բերքը:

⇒ Սոխի մշակում

Սոխի աճեցումը նոր է զարգանում այս համայնքներում: Շնորհիվ աճեցման համար բարենպաստ պայմանների և պահանջարկի առկայության՝ սոխի աճեցումը առաջիկայում հնարավոր է արագությամբ տարածվի և դառնա դաշտավարության հիմնական ճյուղերից մեկը:

Այգեգործություն

Այգեգործությունը երկու համայնքների տնտեսությունների համար էլ հենակետային նշանակություն ունի: Երկու համայնքներում էլ, որտեղ հասանելի է ոռոգման ջուրը, հիմնականում տեղակայվում են մրգատու այգիներ, որոնք ձեռնտու են՝ շնորհիվ դաշտավարության հետ համեմատած բարձր եկամտաբերության և բարենպաստ եղանակային ու կլիմայական պայմանների:

Միևնույն ժամանակ, եթե դաշտավարության մեջ ստեղծվող բերքի համար հիմնական շուկան ՀՀ ներքին շուկան է, ապա հայկական միրգը, շնորհիվ համային բարձր հատկանիշների, պահանջված է նաև արտաքին շուկաներում՝ հատկապես ՌԴ-ում, իսկ վերամշակված միրգը՝ նաև Եվրոպական մի շարք երկրներում:

Երկու համայնքներում էլ նկատվում է դաշտավարությունից այգեգործությանն անցում: Անցումը ստաբիլ է, միևնույն ժամանակ՝ ոչ կտրուկ, ինչը պայմանավորված է այգեգործության մեջ ներդրման դանդաղ վերադարձով (սոր տնկվող այգիներին առնվազն անհրաժեշտ է 5 և ավելի տարիներ բերք տալու համար), ինչպես նաև ոռոգման ջրի մատակարարման հետ կապված բարդություններով:


Այգեգործության զարգացմանը խոչընդոտում է նաև կարկուտից և ցրտահարությունից պաշտպանման միջոցների բացակայությունը, որը լուրջ ռիսկ է հանդիսանում:

Այգեգործության հիմնական ցուցանիշները և եկամտաբերության հաշվարկ

Համայնքներում տնային տնտեսությունների 90% -ը ներգրավված է այգեգործության մեջ: Նրանց մեծ մասն իրենց տնամերձ հողամասերում ունեն այգիներ: Տնամերձ հողամասերից դուրս այգեգործությամբ են զբաղվում մոտ 100 տնտեսություններ, որոնցից՝


- 11 տնտեսություններ ունեն 5 հա և ավելի այգիներ,
- 23 տնտեսություններ ունեն 1-5 հա այգիներ,
- 66 տնտեսություններ ունեն մինչև 1 հա այգիներ:

Մտորն ներկայացված են համայնքներում աճեցվող մրգերի հիմնական տեսակները և ծավալները:



Այգիների գրեթե կեսում աճեցվում է ավանդական դեղձը: Համեմատած այլ մրգերի՝ դեղձի աճեցումը ավելի բարդ է և ծախսատար: Միևնույն ժամանակ դեղձը բավական դժվար է պահպանել, ինչի արդյունքում, չունենալով ամբողջ բերքի արագ իրացման հնարավորություն, բավական մեծանում է բերքի կորուստը:

Եթե ընդունենք 1 հա դեղձի այգու նվազագույն բերքատվությունը 10 տոննա, ապա տարեկան ամենաքիչը այս երկու համայնքներում արտադրվում է 154 հա X 10 տոննա = 1540 տոննա դեղձ: Բերքի 10% - ը վաճառվում է Հայաստան - Վրաստան ավտոմայրուղու վրա, որտեղ կան մոտ 50 փոքր վաճառակետեր: Բերքի 20 %-ը գնում են վերավաճառողները, 10 - 20 % -ը հանձնում են վերամշակող խոշոր ձեռնարկություններին (հիմնականում Այրումի պահածոյի գործարան): Բերքի մոտ 20 % - ը օգտագործվում է տնական պայմաններում օդու թորման համար: Իսկ 30 - 40 % - ը փչանում է և մասամբ օգտագործվում որպես անասնակեր:



Ի տարբերություն դեղձի՝ արքայանարինջի և հոնի մշակումը առավել եկամտաբեր է, ինչի արդյունքում ավանդական դեղձը իր դիրքերը զիջում է սրանց: Արքայանարինջը և հոնը ավելի հեշտ է մշակել, ավելի քիչ ծախսատար են և հեշտ իրացվելի:

Արքայանարնջի մեծ պահանջարկ ունեն սառնարանային տնտեսություններ ունեցող վերավաճառողները, որոնք գնում են բերքը, պահում երկու ամիս և դեկտեմբեր ամսին վաճառում: Արքայանարնջի մեծ պահանջարկ ունեն նաև ենթաշրջանում գործող չորանոցները:

Հոնը ևս մեծ պահանջարկ ունի ինչպես վերամշակող, այնպես էլ վերավաճառող կազմակերպությունների մոտ, որոնք հիմնականում գնում են առկա ամբողջ բերքը և արտահանում ՌԴ:

Համայնքներում աճեցվող մնացած մրգերը հիմնականում փոքր քանակությամբ են և աճեցվում են տնամերձերում, ինչի արդյունքում իրացման խնդիր չի առաջանում: Բերքը վաճառվում է հիմնականում ճանապարհին և վերավաճառողներին:

Այգեգործության համեմատական առավելությունները¹

1	Պտղի անվանումը	Դեղձ	Խնձոր	Արքայա- նարինջ
2	1 հա-ից ստացվող միջին բերքը, կգ ²	20 000	30 000	30 000
3	1 կգ-ի միջին մեծածախ գինը (2013թ)	80	150	200
4	1 հա-ից ստացված եկամուտը ('2'x'3')	1 600 000	4 500 000	6 000 000
5	Կատարված ուղղակի ծախսերը	400 000	300 000	300 000
6	Եկամուտ՝ հանած ուղղակի ծախսեր	400 000	4 200 000	5 700 000
7	1 հա-ի վրա աշխատած մարդ/օրերի քանակը	100	100	100
8	Արտադրողականություն՝ դրամով	12 000	42 000	57 000




Մրգերի վերամշակում

Համայնքների ներսում մրգերի վերամշակում և պահպանում գրեթե չի իրականացվում: Համայնքներում կա 1 սառնարան և 1 չորանոց, որոնք հիմնականում օգտագործվում են սեփական բերքի մի մասի պահպանման և վերամշակման համար:

¹ Այգեգործության մեջ արտադրողականության հաշվարկի համար որպես պայմանական միավորը ընդունված է մեկ հեկտար այգում պտուղների աճեցումը, դրանից ստացվող եկամուտը, ինչպես նաև դրա աճեցման վրա ծախսվող աշխատանքի քանակը:

² Չնայած դեղձի բերքատվությունը կարող է հասնել մինչև 25 տոննայի, բայց հաշվի առնելով վաճառքի հետ կապված բարդությունները, այգեգործները արդյունավետ չեն մշակում ծառերը, ինչի հետևանքով ընկնում է բերքատվությունը և որակը:

«Այգեգործություն - պտղի շարունակական վերամշակում» արժեզրթան համայնքներում



Այգեգործության արժեշրթայի առանձին փուլերի նկարագիր և միջամտություններ

1



Պտղի աճեցում, տեսակավորում, այգիների ընդլայնում

Այգեգործության առաջին փուլում մրգերի աճեցումն է: Ստորև ներկայացված են օղակում եղած թույլ կետերը և հնարավոր միջամտության տարբերակները:

Թույլ կետեր	Հնարավոր միջամտություններ	Գործողություններ, առաջարկություններ
Ոռոգելի հողատարածքների սղություն	Ոռոգելի հողատարածքների ավելացում	Զորական համայնքում տնամերձ հողակտորներին ոռոգման ջուր ապահովող այլընտրանքային ջրագծի կառուցում:
Եղանակային բարդ պայմաններին անպատրաստվածություն	Հակակարկտակայ անների տեղադրում	Հաղթանակ համայնքում երկու հակակարկտակայանների տեղադրման աջակցություն, որոնք թույլ կտան ընդհանուր առմամբ պաշտպանել մոտ 200 հա այգիներ:
Որակյալ նյութերի, տնկիների, քիմիկատների, պարտանյութերի ձեռք բերման դժվարություն	Ենթաշրջանի համար այգեգործական ռեսուրս կենտրոնի հիմնում	Այգեգործական ռեսուրս-կենտրոնի ստեղծում, որը՝ <ul style="list-style-type: none"> կտրամադրի մասնագիտական խորհրդատվություն, Կվաճառի երաշխավորված բուժանյութեր, պարարտանյութեր, սերմեր և գործիքներ, Նոր և արդյունավետ տնկիների մատակարարում: <p><i>Նույն նախաձեռնությունը առաջարկված է Բագրատաշենի ենթաշրջանի 4 գյուղերի համար՝ Բագրատաշեն, Դեբեդավան, Դեղձավան և Պտղավան:</i></p> <p><i>Այգեգործական ռեսուրս -կենտրոնը կարող է ունենալ կենտրոնական դիրք ոչ միայն վերը նշված 6 գյուղերի, այլ նաև հարևան այլ գյուղերի համար:</i></p>
Որակյալ գյուղ ծառայությունների բացակայություն		
Համայնքներում չկան գրեթե վաղահաս սորտեր, որոնց դեպքում հնարավոր է բերքը վաճառել ավելի թանկ գնով	Վաղահաս սորտերի աճեցում	Վաղահաս սորտերի ներկրման աջակցություն:

2

Թույլ վաստի

Պտղի վերամշակում, փաթեթավորում

	միջամտություններ	
Վերամշակող արտադրամասեր գրեթե չկան, ինչի արդյունքում համայնքների ներսում չի իրականացվում մրգերի վերամշակում:	Չորանոցներ	Գործում է մեկ չորանոց, անհրաժեշտություն կա նոր չորանոցների հիմնման, ինչպես նաև գործող չորանոցի տեխնիկական և տեխնոլոգիական հզորացման աջակցության:
	Սառնարանային փոքր տնտեսություններ	Գործում է մեկ սառնարան, անհրաժեշտություն կա նոր սառնարանների կառուցման:
	Օղու և գինու արտադրության փոքր տնտեսություններ	Անհրաժեշտություն կա այգեգործների վերապատրաստման՝ տնական պայմաններում օղու ստացման համար, ինչպես նաև այս ոլորտում բիզնես մոդելի ներդրման հնարավորությունների ուսումնասիրության:
	Տարայավորման, մշակման, մուրաբաների և ջեմերի փոքր արտադրամասեր	Անհրաժեշտություն կա մրգերի և հատապտղի մշակման փոքր արտադրամասերի ստեղծման:

3

Թույլ վաստի

Իրացում

	միջամտություններ	
Հայաստան - Վրաստան ավտոճանապարհի հարևանությամբ գործում են մոտ 50 ինքնաշեն տաղավարներ , որտեղ վաճառվում է բերքը:	Տաղավարների կառուցման աջակցություն	Տաղավարները ինքնաշեն են, անհրաժեշտություն կա ժամանակակից տաղավարների կառուցման:
	Գյուղ. շուկայի կառուցման աջակցություն	Ճանապարհի վրա գյուղ. շուկայի կառուցումը թույլ կտա առավել արդյունավետ դարձնել առևտուրը ճանապարհի մոտ:
	Սառեցնող մեքենաների ձեռք բերման աջակցություն	Սառեցնող մեքենաների առկայությունը թույլ կտա համայնքների բնակիչներին բերքի մի մասը վաճառելու ինչպես ՀՀ այլ մարզերում, այնպես էլ մտածել արտահանման ուղղությամբ:

Դաշտավարություն

Այգեգործությանը զուգահեռ երկու համայնքներում էլ զարգացած է նաև դաշտավարությունը: Ի տարբերություն այգեգործության, դաշտավարության մեջ հնարավոր է եկամուտ ստանալ մի քանի ամսվա ընթացքում, ինչպես նաև հնարավոր է օգտագործել անջրդի և ոռոգման խնդիր ունեցող հողակտորները:

Հիմնականում աճեցվում է

- Ցորեն - 330 հեկտար:
- Գարի - 210 հեկտար:
- Արևածաղիկ - 140 հեկտար:
- Այլ մշակաբույսեր (թութուն , եգիպտացորեն, սոխ, սխտոր և այլն) - 49 հա:

Ստորև ներկայացված է հիմնական մշակաբույսերի շահութաբերությունը մեկ հեկտարի հաշվարկով.

		Ցորեն	Գարի	Արևածաղիկ	Սոխ
1	1 հա-ից ստացվող միջին բերքը, կգ	1500	1500	1300	20000
2	1 կգ-ի միջին մեծածախ գինը (2013թ)	150	130	550	150
3	1 հա-ից ստացված եկամուտը ('1'x'2')	225000	195000	845000	3 000 000
4	1 հա-ի վրա կատարված ծախսերը	140000	130000	320000	1 800 000
5	Շահույթ	85000	65000	525000	1 200 000

Ինչպես երևում է վերը նշված աղյուսակից, ամենաքիչ շահույթ ապահովում է ցորենի և գարու մշակումը: Միևնույն ժամանակ համայնքներում մշակվում է մոտ 540 հեկտար ցորեն և գարի, ինչը բացատրվում է մշակման պարզությամբ (մարդկանց ներգրավվածությունը գործընթացին ամբողջ սեզոնի համար ոչ ավել, քան 10 օր է) և ոչ ոռոգովի հողերի օգտագործման հնարավորությամբ:

Ոռոգովի հողակտորներում ցորեն և գարի չի ցանվում, քանի որ առավել արդյունավետ է արևածաղկի մշակումը կամ այգիների հիմնումը:

Ի տարբերություն հացահատիկի մշակման, արևածաղկին ապահովում է մոտ 7-8 անգամ բարձր շահութաբերություն: Ոռոգովի հողատարածքների զգալի մասում աճեցվում է արևածաղկ: Արևածաղկի աճեցմանն օժանդակում է նաև Բագրատաշեն համայնքում բովարանի առկայությունը, որը հիմնականում ընդունում է ամբողջ բերքը 500 - 700 դրամ գնով՝ կախված բերքի որակից:

Վերջին երկու տարիների ընթացքում փորձ է արվում աճեցնելու նոր մշակաբույսեր՝ սոխ և սխտոր: Սոխը ապահովում է մեկ հեկտարից մոտ 1 200 000 դրամ շահույթ, որը 4 անգամ մեծ է, քան արևածաղկի մշակման դեպքում, ինչի արդյունքում արագորեն կարող է կրկնօրինակվել և տարածվել՝ առաջիկայում դառնալով այս համայնքներում աճեցվող հիմնական մշակաբույսերից մեկը: Այստեղ մենք խոսում են ոչ ջրովի հողատարածքներում սոխի մշակման մասին: Ջրովի հողատարածքներում սոխը կարող է ունենալ երկու անգամ ավելի շատ բերքատվություն և առաջիկայում կնկատվի արևածաղկի աճեցման մասնակի փոխարինում սոխով:

Համայնքներում կարող է մեծ արդյունավետություն ունենալ ջերմատների հիմնումը, որը թույլ կտա աճեցնել բանջարեղեն և կանաչի նաև ձմռան ամիսներին, երբ պահանջարկը բավական մեծ է:

Մեղմ ձմեռը թույլ կտա մրցակցել ՀՀ ջերմատներ ունեցող այնպիսի շրջանների հետ, ինչպիսիք են Արարատյան դաշտը և Վայոց Ձորի շրջանները: Ջերմատների տեղադրման փորձ արդեն արվել է հարևան Պտղավան համայնքում, որտեղ կառուցվել են 17 ջերմատներ՝ Հայաստանի ՓՄՁԱԿ, ՄԱԿ-ի «Աջակցություն ՓՄՁ զարգացմանը Հայաստանում» և Գեղարքունիքի առևտրաարդյունաբերական պալատի աջակցությամբ:



Հողագործության մեջ հնարավոր միջամտություններ

Բարելավման հնարավորություններ	Հնարավոր միջամտություններ	Գործողություններ, առաջարկություններ
<p>Որակյալ սերմացուի ձեռքբերման հետ կապված բարդություններ</p>	<p>Նոր սերմացուի մատակարարում</p>	<p>Արևածաղկի, հացահատիկի և սոխի որակյալ սերմերի ձեռքբերման աջակցություն:</p>
<p>Մշակող գյուղտեխնիկան հին է և քիչ քանակությամբ: Հողագործները չեն կարողանում ժամանակին վարել հողը, մեծ պահանջարկը հանգեցնում է գների անխելամիտ թանկացման:</p>	<p>Տրակտորների ձեռքբերման աջակցություն:</p>	<p>Ֆերմերներին և մեխանիզատորներին հնարավոր գյուղտեխնիկայի թարմացման ուղղությամբ տեղեկության տրամադրում:</p>
<p>Չկա ճշգրիտ ցանքի սերմացան, ինչը սոխի, սխտորի, եգիպտացորենի ցանքը դարձնում է բարդ և ծախսատար գործընթաց:</p>	<p>Ճշգրիտ ցանքի օդամղիչ սերմացանի ձեռքբերման օժանդակություն:</p>	<p>Շահագրգիռ ֆերմերի/ մեխանիզատորի առկայության դեպքում սարքավորումների ձեռքբերման և ներմուծման աջակցություն:</p> <p>Սոխի աճեցման տեխնոլոգիական տեղեկատվության տրամադրում:</p>

Անասնապահություն

Մասամբ զարգացած է նաև անասնապահությունը: Համայնքներում կան 766 խոշոր եղջերավոր անասուններ, որից 421 -ը կովեր են: Մանր եղջերավոր անասունների քանակը 472 է:

Անասնապահությունը շահութաբերությամբ էականորեն զիջում է այգեգործությանը և դաշտավարությանը, ինչի հետևանքով անասնապահության հիմքում հիմնականում ընկած է սեփական կարիքի բավարարումը և կերի առկայությունը՝ անջրդի հողերում ցանվող մշակաբույսերը և չվաճառված միզը:

1	Անվանումը	Խոզ	Կով	Բավոդ հորթ
2	Օպտիմալ տնտեսություն ³	30 հատ երկու ամսական գոճի	10 կով	10 հորթ
3	Ստացվող արդյունքը՝ միավորից	40 կգ միս՝ յուրաքանչյուր վեց ամսական խոզից	2 000 լիտր կաթ՝ 1հորթ	200 կգ միս երկու տարում
4	Ընդհանուր արդյունքը	1200 կգ միս	20 000 լ կաթ՝ 10 հորթ	2000 ն կգ միս
5	Մեկ միավորի մեծածախ գինը	2500 դրամ՝ մեկ կիլոգրամ խոզի միսը	130 դրամ՝ մեկ լիտր կաթը. 60 000 դրամ՝ մեկ հորթը	2000 դրամ՝ մեկ կիլոգրամ միսը
6	Ստացվող եկամուտը	3 000 000	3 200 000	4 000 000
7	Անհրաժեշտ ծախսերը	1050000	1 600 000	2200000
8	Շահույթ	1 950 000	1 600 000	1 800 000

Համայնքներում առավել արդյունավետ է մսատու անասնապահությունը, որը ապահովում է ավելի մեծ շահույթ: Միննույն ժամանակ հունիս - հուլիս ամիսներին, երբ այս համայնքներում միսը հանում են վաճառքի, շուկայում անասնապահական համայնքները դեռևս միս չեն մատակարարում, ինչը թույլ է տալիս արագ սպառել արտադրանքը:

Կանանց ներգրավվածությունը արժեշղթաներում


Այգեգործության մեջ կանայք ներգրավված են հիմնականում բերքահավաքի ժամանակ, որոնց մասնակցում է մոտ 130 կին և աղջիկ: Կանայք ներգրավված են նաև տնամերձ այգիների մշակման մեջ: Իրենց սեփական տնամերձ այգիների և հողատարածքների մշակմանը մասնակցում են ավելի քան 300 կին:

Դաշտավարության մեջ կանայք հիմնականում ներգրավված են արևածաղկի բերքի հավաքման և բերքի պահեստավորման գործընթացներում՝ որպես վարձու աշխատողներ: Այստեղ աշխատում են մոտ 90 կին: Եվս 150 կին ներգրավված են սեփական բերքի պահեստավորման գործընթացում:

Եվս 42 կին ներգրավված են անասնապահության մեջ՝ հիմնականում կիթի, տնական պայմաններում կաթնամթերքի ստացման և կենդանիների խնամքի գործընթացներում:

Առևտրի ոլորտում ներգրավված են 36 կին, որոնցից 22-ը ճանապարհին վաճառում են իրենց բերքը:

Արժեշղթաներում ներգրավված կանայք.



Նախաձեռնությունների ամփոփ նկարագիր

Այգեգործություն

- Ոռեգելի հեղատարածքների ավելացում: Զորական համայնքում տնամերձ հողակտորներին ոռոգման ջուր ապահովող այլընտրանքային ջրագծի կառուցում:
- Ենթաշրջանի համար այգեգործական ռեսուրս-կենտրոնի հիմնում:
- Հաղթանակ համայնքում երկու հակակարկտակայանների տեղադրման աջակցություն, որոնք թույլ կտան ընդհանուր առմամբ պաշտպանել մոտ 200 հա այգիներ:
- Վերամշակող ձեռնարկությունների հիմնման աջակցություն.
 - Զորանոցներ, սառնարարներ, օդու արտադրություն, հյութերի և մուրաբաների արտադրություն:
- Տաղավարների կառուցման աջակցություն:
- Գյուղ. շուկայի կառուցման աջակցություն:
- Սառեցնող մեքենաների ձեռքբերման աջակցություն:
- Վաղահաս սորտերի աճեցում:

Դաշտավարություն

- Արևածաղկի, հացահատիկի և սոխի որակյալ սերմերի ձեռքբերման աջակցություն:
- Ֆերմերներին և մեխանիզատորներին հնարավոր գյուղտեխնիկայի թարմացման ուղղությամբ տեղեկության տրամադրում:
- Շահագրգիռ ֆերմերի/ մեխանիզատորի առկայության դեպքում Ճշգրիտ ցանքի օդամղիչ սերմացանի ձեռքբերման և ներմուծման աջակցություն:
- Ջերմատների հիմնման աջակցություն:

Շնորհակալություն ենք հայտնում Զորական և Հաղթանակ համայնքների
գյուղապետարաններին՝ հանձինս գյուղապետերի և տեղական թիմի անդամների՝
ծրագրի իրականացմանն աջակցելու համար:

